

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY
ЭТНОГРАФИЯ

ՀՏԴ՝ 39.395

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՍԿԵՐԻՉ-ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

XIX դ.–XX դ. ՄԿԶԲԻՆ

(համառոտ ուրվագիծ)¹

Գրիգոր Թ. Աղանյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում քննության են առնված Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությանը վերաբերող տարազան նյութերը, որոնց միջոցով փորձ է արվել վեր հանել հիշյալ արհեստների տեղն ու դերը քաղաքային մշակույթի տարբեր բնագավառներում: Հոդվածում ներկայացվել են ոսկերչական և արծաթագործական արտադրանքի ծավալները, տեսականին և առանձնահատկությունները վերոնշյալ ժամանակաշրջանում: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրությունն իրականացվել է պատմաազգագրական և էթնոմշակութաբանական հետազոտությունների մեթոդաբանությամբ: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վեր են հանվել Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործական արվեստի ակունքները, դրա նմանություններն ու տարբերությունները հայկական ոսկերչական մյուս դպրոցներին: Հատուկ ուշադրություն է դարձվել մինչ այժմ չիրապարակված արխիվային նյութերի վերլուծությանը: Վերլուծություն. Քննության առնված դաշտային ազգագրական, արխիվային, տպագիր և թանգարանային նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը, շարունակելով Կարին-Կարս ոսկերչական դպրոցի ավանդույթները, ժամանակի ընթացքում ձեռք է բերել ինքնօրինակ ձեռագիր և սեփական դիմագիծ: Արդյունքներ. Հետազոտության արդյունքում ներկայացվել են այն տեխնիկա-տեխնոլոգիական հնարք-

¹ Հոդվածը գեկուցման տեսքով ներկայացվել է «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ»-ում (Հանրապետական 4-րդ գիտաժողով՝ նվիրված Լենինականի անվանակոչության 100-ամյակին), ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 16 օգոստոսի 2024 թ.:

ներն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ էին Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործական մշակույթին: Ներկայացվել է նաև ոսկերչական և արծաթագործական արտադրանքի հիմնական տեսականին՝ սկսած կենցաղային սպասքից մինչև նրբագեղ զարդերը: Կազմվել է Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում 1844-1913 թթ. ընթացքում գրանցված ալեքսպոլցի ոսկերիչ-արծաթագործների անվանացանկը:

Բանալի բառեր՝ ոսկերչություն, արծաթագործություն, Ալեքսանդրապոլ, քաղաքային մշակույթ, կենցաղային սպասք, զարդեր:

Ինչպես հղել՝ Աղանյան Գ. *Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIX դ.–XX դ. սկզբին* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ. 2 (27): 173-186 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

IN THE GOLDSMITHING AND SILVERSMITHING OF ALEXANDROPOL 19TH AND EARLY 20TH CENTURIES (brief outline)

Grigor T. Aghanyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This article examines the various materials related to the goldsmithing and silversmithing of Alexandropol, attempting to reveal the place and role of these crafts in different areas of urban culture. The article aims to present the volumes, types, and characteristics of gold and silver production. **Methods and Materials:** The study was conducted using historiographical and ethnocultural research methodologies. By employing a historical-comparative method, the roots of Alexandropol's goldsmithing and silversmithing art as well as its similarities and differences with other Armenian goldsmithing schools have been explored. Special attention was paid to the analysis of previously unpublished archival materials. **Analysis:** The analysis of the collected ethnographic, archival, printed, and museum materials shows that Alexandropol's goldsmithing and silversmithing continued the traditions of the Karin-Kars goldsmithing school, gradually developing its unique style and identity over time. **Results:** The research presents the techniques and technological characteristics typical of Alexandropol's goldsmithing and silversmithing culture. It also presents the main types of gold and silver products, ranging from household utensils to exquisite jewelry. A list of goldsmiths and silversmiths from Alexandropol registered at the Tiflis Tax Office between 1844 and 1913 has also been compiled.

Key words: goldsmithing, silversmithing, Alexandropol, urban culture, household utensils, jewelry.

Citation. Aghanyan G. *The Goldsmithing and Silversmithing of Alexandropol in the 19th and Early 20th Centuries.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri. 2024. 2 (27). 173-186 pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ЮВЕЛИРНОЕ ДЕЛО В АЛЕКСАНДРОПОЛЕ В XIX – НАЧАЛЕ XX ВЕКОВ (краткий очерк)

Григор Т. Аганян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: В статье представлены разнородные сведения и материалы, касающиеся ювелирного ремесла Александрополя, целью которого является раскрытие роли и места ремесла в различных областях городской культуры. В статье предпринята попытка раскрыть объемы производства, ассортимент и характерные особенности золотых и серебряных изделий. **Методы и материалы:** Исследование проводилось с использованием методологии историко-этнографического и этнокультурного исследования. Использованием историко-сравнительного метода, освещены истоки Александропольского золото-серебряного искусства, его сходства и различия с другими армянскими ювелирными школами. Особое внимание было уделено анализу ранее не опубликованных архивных материалов. **Анализ:** Анализ исследований полевых этнографических, архивных, печатных и музейных материалов, демонстрирует, что ювелирное ремесло в Александрополе, опираясь и продолжая традиции Карин-Карсской ювелирной школы, со временем выработало уникальный стиль и индивидуальные черты. **Результаты:** В результате исследования были представлены технико-технологические приемы и особенности, характерные для ювелирной культуры Александрополя. Также представлен основной ассортимент золотых и серебряных изделий, варьирующих от предметов домашнего обихода до изысканных украшений. Был составлен список алекпольских мастеров золотых и серебряных дел, зарегистрированных в Пробирной палате Тифлиса в 1844-1913 годах.

Ключевые слова: золотое дело, серебряное дело, Александрополь, городская культура, домашняя утварь, ювелирные украшения.

Как цитировать: Аганян Г. Ювелирное дело в Александрополе в XIX- начале XXвв. //

“Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 173-186 сс..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ՆԱԽԱԲԱՆ. Տեխնիկա-տեխնոլոգիական և գեղագարդման առանձնահատկություններից ելնելով՝ հայկական ոսկերիչ-արծաթագործության մեջ կարելի է առանձնացնել մի շարք դպրոցներ՝ Վան-Վասպուրականի, Կարինի (սրանից սերել են Կարսի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլ-Գյումրու դպրոցները), Փոքր Հայքի, Կիլիկիայի, Պարսկահայքի, Սյունիք-Արցախի և Երևանի: Յուրաքանչյուր ոսկերչական դպրոց մասնագիտացած և հմտացած էր արտադրանքի որոշակի տեսակի կամ էլ ոսկերչական տեխնիկայի որևէ բնագավառում:

XIX-XX դդ. հայկական ոսկերչությունը, շարունակելով նախորդ շրջանի ավանդույթները, ձեռք բերեց նոր որակներ, և արտադրանքի տեսականին առավել ընդարձակվեց ի հաշիվ կենցաղային կիրառության նոր իրերի պատրաստման: Արծաթյա կենցաղային սպասքի (ափսեներ, գդալներ, ըմպանակներ, բաժակակալներ և այլն) առկայությունը հայկական քաղաքների արհեստավորաառևտրական բնակչության բարձր

դիրքի և Բարեկեցության ցուցիչ էին դարձել: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի բազմամագանությամբ էր պայմանավորված նաև հայկական այս կամ այն տարածաշրջանի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործության ընդհանուր բնութագիրը

Ալեքսանդրապոլում ոսկերիչ-արծաթագործության, ինչպես նաև դրա հետ կապված հարակից արհեստները լայն տարածում ունեին և բաժանվում էին նեղ մասնագիտացված ճյուղերի, որոնք հայտնի էին օտարալեզու հետևյալ անվանումներով. *դուռումջի-ոսկերիչ, զարգար-արծաթագործ, դարադույումջի-հասարակ մետաղներից զարդ պատրաստողներ* և *ջավահիրջի-ակնագործ*: Նեղ մասնագիտացումները կապված են օգտագործվող մետաղի կամ պատրաստված իրերի տեսակի հետ: Արծաթյա կենցաղային սպասքի՝ ափսեների, գդալների, ըմպանակների, բաժակակալների առկայությունը Ալեքսանդրապոլի արհեստավորա-առևտրական բնակչության սոցիալական բարձր դիրքի և Բարեկեցության ցուցիչ էին: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի (ապարանջաններ, մանյակներ, քունքակախիկներ, մատանիներ, գոտիներ և այլն) բազմազանությամբ էր պայմանավորված նաև ալեքպուցի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը: Ալեքսանդրապոլի արծաթագործության ինքնօրինակ նմուշ են տղամարդու և կնոջ գոտիները, ինչպես նաև արծաթե և ոսկե ապարանջանները, որոնք էապես տարբերվում են հայկական մյուս ոսկերչական դպրոցների նմանատիպ զարդերից: Տղամարդու թամբաձև ճարմանդով գոտին ներկայացնում էր Կարսի, իսկ կնոջ թելքաշ-հատիկանախշով զարդարված գոտին՝ Կարինի արծաթագործական ավանդույթը:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործներն օգտագործում էին հայտնի տեխնիկա-տեխնոլոգիական հետևյալ եղանակները՝ մոմե և կավե կաղապարներում ձուլում, դրվագում, կռում-կոփում, դրոշմում, թիթեղի զլանվածքի ստացում, թելքաշ-հատիկանախշում, նախշացանցավորում (ֆիլիգրան), զուգաթելի նստեցում, թելերով հյուսում, հատիկներով զարդարում, փորագրում, ընդելուզում, ոսկեջրում, սևադապատում, ոսկեգույն կամ արծաթագույն համաձուլվածքների ստացում: Ոսկերիչը պետք է կարողանար ընտրել և օգտագործել պատրաստվող առարկային կամ զարդին համապատասխան թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, ագուցեր դրանք և հմուտ լիներ ոսկու կամ արծաթի հարգը որոշելու հարցում [12, էջ 81]: «Մուրճ» ամսագրի 1901թ. 10-րդ համարում հրապարակված «Տնայնագործությունը կովկասյան ցուցահանդեսում» հոդվածում հեղինակը ախալցխացի հայ վարպետների նրբահյուս աշխատանքները ներկայացնելուց հետո անդրադառնում է ալեքպուցի արծաթագործներին. «Դրանցից ավելի ուշագրավ է ալեքսանդրապոլցի Համազասպ Ամիրջանյանի ցուցադրած արծաթ-ոսկեջուր շիշը, որ շինված է ամբողջապես մի կտոր արծաթից: Դա նշանավոր է իբրև մի գեղարվեստական գործ, որովհետև զարդարված է մի շարք նուրբ նկարներով: Շշի կատարին նստած է Ոգի Հայաստանին, իսկ նրա շուրջը՝ հին փառքի բեկորները-ավերակները: Նեղլիկ կոկորդի շուրջը դասավորված են Գրիգոր Լուսավորչի, ս. Մեսրոպի, Խորենացու և Գրիգոր Նարեկացու պատկերները, դրանից ներքև Հայկի, Տիգրան Բ-ի, Տրդատի և Վարդանի պատկերները, իսկ շշի փորի վրա՝ Անիի դիվանատունը, կիսաքանդ պարիսպները և ալեգարդ Մասիսն ու Սբ Էջմիածինը: Ճիշտ է, որ մեծ շնորհք է հարկա-

վոր այդքան նկարները մի փոքրիկ անոթի վրա գետեղելու համար: Այդ նրբագարդ անոթն ամենայն իրավամբ կարող է մի անգնահատելի զարդ դառնալ ամեն մի հարուստ ընտանիքում: Գինը 200 ռուբլի է: Այդ շշի մոտ դրված է նույն պարոնի պատրաստած արծաթ-ոսկեջուր հսկայական գոտին՝ 13 փունտ (5,323.5 կգ) ծանրությամբ» [5, էջ 233-234]:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործների մասին բերենք նաև Ն.Նիկողոսյանի արժեքավոր վկայությունը. «Ոսկերիչներից անվանի էր Աղաբալյան Ստեփանը (Ուստա Ստեփանը): Արծաթի վրա դուրս էր բերում գեղեցիկ պատկերներ, մանր փորվածքներ: Սա մի ժամանակ էլ տպարան բացեց (1872-73 թթ.), որտեղ տպագրում էր «Ավետիս»-ներ, բլանկներ: Տառերն ինքն էր փորագրում, ձուլում: Սրա խորհրդով հետո Սանտյան Գևորգը հիմնեց տպարան, որ գոյություն ունեցավ մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Ոսկերիչների մեջ մեծ հմտություն ուներ Մարտիրոս Տարախչյանը (դույունչի Մարտիրոս): Սա փորագրության արհեստը նրբության, կատարելության հասցրեց: Շինում էր նիշած ապարանջաններ, ծխախոտի տուփերի վրա սևադուր էր հայ նահապետների, թագավորների բավական հաջող դեմքեր: Բայց այդ շնորհալի վարպետը հարբեցողության զոհ եղավ: Ոսկերիչներից նշանավոր էր նաև Հարություն Զարգարյանը, իր ոսկու կամ արծաթի գեղեցիկ շինվածքով և մանրանկար քանդակով (ажурная работа): Թողեց աշակերտներին իր գործը կատարելու: Սրանց թվին էր պատկանում ջավահիրճի Գրիգորը, որ հմուտ էր ակնեղեններ թրաշելում (шлифовка - Գ.Ա.)» [6, էջեր 4344-4345]:

1839 թ. մի մեծ խումբ ծագումով կարինցի արհեստավորներ, դրանց թվում նաև ոսկերիչներ, որոնք սկզբնական շրջանում հաստատվել էին Ախալցխայում, տեղափոխվեցին նոր հիմնված Ալեքսանդրապոլ [8 էջեր 166-167]: Հիշյալ վերաբնակիչներից էր Նազարեթ Կարապետյանը, որի սերունդները շարունակեցին գործել Ալեք-Պոլում՝ հետագա տարիներին պատրաստելով նրբահյուս արծաթյա զարդեր և կենցաղային իրեր:

Ոսկյա և արծաթյա իրերի հարգանշումն ու դրոշմակնքումը

1843 թ. հունվարի մեկից Թիֆլիսում սկսեց գործել Հարգանշային գրասենյակը (Пробирная палата) [11, էջ 81], որի աշխատակիցները սկսեցին խստորեն հետևել ոսկյա և արծաթյա իրերի որակին և դրանց մաքրությանը: Հարգանշային գրասենյակը հաստատություն է, որում ստուգվում է արծաթի ու ոսկու մաքրությունը, և դրվում են հարգը հաստատող դրոշմակնիքներ: Հարգը հաստատող դրոշմակնիքներ ստանալու և սեփական անվամբ կամ որոշակի պատկերով դրոշմ դնելու իրավունքը ձեռք բերելու համար ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասը գրանցվեց Հարգանշային գրասենյակում և ստացավ գործելու ազատ իրավունք: Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում 1844-1913 թթ. միջակայքում գրանցվել և գործելու իրավունք է ստացել ալեքսանդրապոլի 174 վարպետ ոսկերիչ-արծաթագործ [9, էջ 121]:

Հումքի ձեռքբերման աղբյուրները հիմնականում երկուսն էին: Վարպետների մեծ մասը Հարգանշային գրասենյակի կազմած հարցաթերթիկում նշում էր, որ արծաթը կամ ոսկին բերում են պատմիրատուները: Թանկարժեք մետաղների ձեռքբերման մյուս աղբյուրը դրանց մեծածախ վաճառքով զբաղվող առևտրականներն էին, որոնցից, ճյուղային համքարության գլխավոր վարպետի հսկողությամբ գնվում էին ոսկին և արծաթը:

Վերջինս հատկապես գնվում էր հայ խոշոր առևտրականներ Արգումանյաններից, որոնք իրենց հերթին արծաթը ներմուծում էին Համբուրգից: Ռուսական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ մեծածախ արծաթը գնվեր մոսկվացի առևտրական Կոայնիսից, պնդելով, որ նրա վաճառած արծաթի հարգն (մաքուր 84) ավելի բարձր է, քան Արգումանյաններինը (82,5) [9, էջ 124]: Սա ժամանակին տարածված տնտեսական հովանավորչության մի տեսակ էր, որն առավել խորացավ XIX վերջերին, երբ «լայնամասշտաբ հարձակում» սկսվեց տեղական արհեստների և համքարությունների վրա: XIX դ. երկրորդ կեսին անդրկովկասյան շուկան ողողեց ցածր հարգանիշ ունեցող (20-30), այսպես կոչված, «Վարշավյան արծաթը» (արհեստավորների շրջանում ընդունված էր անվանել «վարշադ»), որը մի քանի գունավոր մետաղների համաձուլվածք էր, ժամանակի ընթացքում սևանում էր կամ ծածկվում էր կանաչավուն փառով: Այս կեղծ արծաթը հիմնականում օգտագործում էին դարադուրյունները՝ գյուղական և քաղաքային բնակչության չուննոր դասի համար էժանագին զարդեր պատրաստելիս: Ալեքսանդր արծաթագործ վարպետները չէին օգտագործում և քամահրական վերաբերմունք ունեին դրա նկատմամբ՝ ի տարբերություն երևանցի արծաթագործների:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ արհեստավորների կողմից պատրաստված ոսկյա իրերի հումքի ձեռքբերման և արտադրանքի ծավալների մասին տեղեկությունները բավական սուղ են: Է. Աստվածատրյանի ձեռքի տակ եղած տվյալները, որոնք վերաբերում են 1851 թ., ցույց են տալիս, որ պաշտոնապես գրանցված ալեքսանդր 14 վարպետները պատրաստել են ոսկյա զարդեր 15 ֆունտ 48 զոլոտնիկ ընդհանուր քաշով [9, էջ 125], որը ժամանակակից չափման միավորի վերածելիս հավասար է մոտավորապես 6400 գրամի: Նույն ժամանակի համար պատրաստված արծաթե զարդերի և առարկաների ընդհանուր քաշը կազմել է 2 փուր, 16 ֆունտ 75 զոլոտնիկ՝ մոտավորապես 38872 գրամ [9, էջ 129]: Հետագա տարիներին քաղաքի բնակչության աճին և կենսապայմանների բարելավմանը զուգընթաց մեծանում էր նաև ազնիվ մետաղներից պատրաստված զարդերի և հատկապես արծաթյա սպասքի պահանջարկը: Վերջինների պատրաստումը, ի տարբերություն զարդերի, աշխատատար չէր և չէր պահանջում մանրամասն զարդանախշում ու պաճուճագարդում: Թեյի պարագաները՝ գդալները, աղամանները, շաքարամանները, բաժակակալները և այլն, ինչպես նաև զանազան չափերի ափսենները, թասերը, սկուտեղները, ի տարբերություն զարդերի, բավական զանգվածեղ էին:

Ոսկերչական խանութ-արհեստանոցների տեղակայումը

Ն. Նիկողոսյանը վկայությունից երևում է, որ մինչև Ալեքսանդրապոլում այսպես կոչված Եկամտաբեր տների կառուցումն ու երևան գալը «քաղաքում կար ոսկերիչների հատուկ շարք (ոսկերչնոց): Տեքստիլ տանող ճանապարհին, Թիֆլիսի խճուղու վրա, նոր տնկած այգու տեղը (ներկայիս Սայաթ-Նովա փողոցում-Գ.Ա.) նրանք խանութներ շինեցին, առժամանակ էլ այդտեղ աշխատեցին, հետո կրկին քաշվեցին քաղաքի կենտրոնը» [6, էջ 7339]: Ալեքսանդրապոլի ոսկերչական արհեստանոցները տեղակայված էին քաղաքի կենտրոնում մեծահարուստ և ձեռներեց քաղաքացիների՝ հիմնականում առևտրական դասի կառուցած Եկամտաբեր տներում: Համաձայն Է. Աստվածատրյանի ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերի՝ Գեներալսկի փողոցում

գրանցված էր 5 արհեստանոց, Ալեքսանդրովսկիում՝ 11 և մեկը՝ Ժամի կամ Տաճարի փողոցում [9, էջ136]: Վերոհիշյալ փողոցներում աշխույժ անցուղարձ կար, և դրանցում կրպակ-արհեստանոց ունենալը չափազանց հարգի (պրեստիժային) էր համարվում: Ալեքպոլցի որոշ ոսկերիչ-արծաթագործներ Կարսի մարզի կազմավորումից հետո խանութներ բացեցին նաև Կարսում, օր՝ Մկրտիչ Սուջանցը: Հատկանշական է, որ ոսկերչական և զինագործական արհեստանոցները գտնվում էին միմյանց շատ մոտ, քաղաքի կենտրոնական փողոցներում, ինչը խոսում է արհեստների այս ճյուղերի միջև սերտ կոոպերացիայի մասին: Զինագործները արհեստանոցներ ունեին ոչ միայն Գեներալսկի, այլև դրան հարող Լոռիս-Մելիքովսկի և Միխայլովսկի փողոցներում [10, էջեր 80-82]:

Վարպետի տղեն վարպետ է

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործները միավորված էին էսնաֆության կամ արհեստավորական եղբայրության մեջ, որի շարքերում մինչև 1867 թ. կանոնադրության հաստատումը միավորված էր շուրջ 63 վարպետ, ենթավարպետ և աշակերտ [7, էջ 55]: Հարկ է նշել, որ քաղաքում գործող ժամագործները (սհասչի) ևս միացել են վերոհիշյալ համքարությանը:

Ոսկերիչ-արծաթագործությունը համարվում էր երկարատև և հիմնավոր ուսուցում պահանջող արհեստ: Արհեստին բնորոշ հիմնական տեխնիկա-տեխնոլոգիական հմտություններին, գործիքակազմին և նրբություններին հասու լինելու համար հարկավոր էր 4-ից 9 տարի ժամանակ: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում էր մեր բանասաց, ալեքպոլցի վերջին վարպետներին աշակերտած վարպետ Սերգեյը. «Ոսկերիչների գործիքների քանակն ու տեսակները անհաշիվ են, միշտ էլ ինչ-որ գործիք կամ հարմարանք պակասում է» [1]: Ոսկերիչ-արծաթագործության բնագավառում վարպետության աստիճանին արժանանալու համար ենթավարպետը կամ վարպետացուն ճյուղային էսնաֆության վարպետների դատին պետք հանձներ իր պատրաստած նշանի մատանին և կանացի արծաթյա գոտի [12, էջ134]: Ալեքպոլցի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասն առաջնորդվում էր «Վարպետի տղեն վարպետ է» ավանդական սկզբունքով, և պատահական չէր, որ այս զբաղմունքով պարապողների շրջանում ամենամեծ թիվն էին կազմում արհեստավորական գերդաստանները, գործինակ՝ Կոշտոյանները, Պապանյանները, Տարախչյանները, Աղաջանյանները, Աղաբալյանները, Ամիրջանյանները, Բասենցյանները, Զարգարյանները, Պարունակյանները, Սուքիասյանները և այլք: Հիշյալ տոհմերից յուրաքանչյուրն ուներ իր ձեռագիրը և հասել էր արհեստի որևէ նեղ բնագավառում մասնագիտանալու բարձրագույն աստիճանի: Ալեքպոլցի մի շարք վարպետներ իրենց աշխատանքները ներկայացրել էին կովկասյան, համառուսաստանյան և միջագային ցուցահանդեսներում: Առաջինը վարպետ Հաբեթնակ Աղաջանյանն էր, որի աշխատանքը ցուցադրվել է Լոնդոնում, վերը նշեցինք նաև Համազասպ Ամիրջանյանի մասին: Նշանավոր ոսկերիչ-արծաթագործ վարպետ Մարտիրոս Տարախչյանի աշխատանքը ոսկե մեդալի է արժանացել Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում [7, էջ 27]:

Ոսկերիչ-արծաթագործների համքարության-էսնաֆության հովանավոր սուրբը՝ պատրոն-փիրը, Սուրբ Տապանակը պատրաստած Բեսելիել ճարտարապետն էր (Բեսելիելը տապանակը կառուցեց կարծր փայտից... Այն ներսից ու դրսից պատեց ու-

կով...) [2 Ելք 37. 1-2], որ հնարել էր արծաթն ու ոսկին ագուցելու և կպցնելու արհեստը և սովորեցրել էր մարդկանց: [3] Ոսկերիչ-արծաթագործների էսնաֆները իրենց հովանավոր պատրոն-փիրին հիշում էին հիմնականում Մբ Ծննդյան կամ հատկապես Մբ Զատկի օրը, երբ համայնական կամ ախարի մատաղին մասնակցելուց բացի, իրենց էսնաֆի անունից մի քանի ոչխար կամ եզ էին մորթում, պատրաստում արդար յուղով բրնձով շիլա-փլավ և բաժանում ջրավորներին, հիվանդներին, անկելանոցներին և կալանատներում բանտարկվածներին: Այդ օրը էսնաֆականները մեծ տոնախմբություն էին կազմակերպում՝ ի հիշատակ իրենց հովանավոր սրբի: Հարկ է նշել, որ ալեքսյուցի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասը ջերմեռանդ ու նվիրյալ հավատացյալ էր, և դրավատ ապացույցը նրանց շարքերում դեպի Սուրբ քաղաք՝ Երուսաղեմ ուխտ գնացածների մեծ թվի առկայությունն է: «Ուխտ գնացողներին անվանում էին մահտեսի, այսինքն՝ մահը տեսած ու դրանց մատով էին ցույց տալիս, -գրում էր «Մշակ»-ին թղթակցող Ա.Նալյանցը և շարունակում, -վերադառնալուց հետո դորանք իրանց ամեն մի վարքով ու խոհեմությամբ բարի օրինակ և խրատատու հայր էին դառնում ժողովրդին» [4]: Թիֆլիսի Հարգանշային գրասենյակի փաստաթղթերում այդ արհեստավորների անվան կոդքին հիշատակվում էր Մուղղուսի (նույնն է ինչ Մահտեսի) պատվանունը, ի մասնավորի՝ Գալստյան Մուղղուսի Ստեփան, Գրիգորյան Մուղղուսի Ստեփան, Դանիելյան Մուղղուսի, Հարությունյան Մուղղուսի Սաֆար, Հովսեփյան /Օսիպյան/ Մուղղուսի Գրիգոր, Մկրտչյան Մուղղուսի Դանիել, Մկոյան Մուղղուսի Դանիել, Նիկողոսյան Մուղղուսի Եղիկ, Սարգսյան Մուղղուսի Պապիկ, Սարգսյան Մուղղուսի Գևորգ, Ստեփանյան Մուղղուսի Գրիգոր, Սուքիասյան Հաջի Մուղղուսի Մկրտիչ և այլք: Ալեքսյուլի ոսկերիչ-արծաթագործների էսնաֆության վերջին գլխավոր վարպետը Մարտիրոս Տաբախյանն էր:

ԵԶՐԱՆԱԳՈՒՄ. Ամփոփելով կարող ենք փաստել, որ Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը, սնվելով Կարին-Կարս դպրոցի ավանդույթներից, ժամանակի ընթացքում ձեռք բերեց սեփական դիմագիծ՝ դառնալով հայկական ոսկերչական արվեստի ուրույն դրսևորումներից մեկը:

1844-1913 թթ. Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում գրանցված ալեքսանդրապոլցի ոսկերիչ-արծաթագործների անվանացուցակ*

ԱԱՀ	գրանցման տարեթիվը
Ադելխանյան Աբրահամ /Ապրո/	1844
Աղաբաբյան Ստեփան	1879
Աղաբաբյան Սուքիաս	1847-1849
Աղաբաբյան Ստեփան	1884
Աղաջանյան Հաբեթյակ, մասնակցել է Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսին	1862
Աղաջանյան Հարություն	1877

* Ցուցակը կազմելիս օգտվել ենք Է. Աստվածատրյանի նյութերից: Որոշ վարպետների ազգանուններ ռուսական տառադարձության և գրանցողների անգիտության պատճառով աղավաղվել են, ուստի փորձել ենք հնարավորինս շտկել:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIX դ.–XX դ. սկզբին (համառոտ ուրվագիծ)

Ամիրջանյան Պողոս	1884
Ամիրջանյան Համազասպ Պողոսի, 1900թ. մասնակցել է Փարիզի, իսկ 1901թ.՝ Կովկասի տնայնագործական ցուցահանդեսներին	1899-1901
Առաքելյան Հարություն	1867
Ասլիյան Աղաջան	1856
Ավազյան Եղիա	1845-1848
Ավետիսյան Ստեփան	1887
Ավետիսյանց Պետրոս	1913
Ատոմյան Հովան Վարոսի	1892
Արաքաջյան Տիգրան Ավետիսի	1913
Արտեմյան Նազարեթ	1856
Արտեմյան Սաֆար	1856
Բաբայան Կարապետ	1846-1856
Բաբայան Ղազար	1886
Բասենցյան Հարություն	1879-1886
Բասենցյան Դավիթ Հարությունի	1892
Բասենցյան Հովհաննես	1884-1887
Բարունակյան Գևորգ	1861-1865
Բեզլարյան Մկրտիչ	1848-1849
Գալստյան Ադամ	1887
Գալստյան Մուղղուսի Ստեփան	1846-1855
Գալստյան Սարգիս	1848-1849
Գասպարյան Սերոբ	1884
Գասպարյան Սարիբեկ	1887
Գևորգյան Եղիա-1887	1887
Գրիգորյան Գևորգ	1887
Գրիգորյան Տիգրան	1884-1886
Գրիգորյան Մուղղուսի Ստեփան	1848
Գուրնուտյան /Ղուրնուտյան/ Օնան	1887
Գարայանց /Ղարայանց/ Նասին	1879
Գարայանց/Ղարայանց/Ստեփան	1884-1895
Գարայանց /Ղարայանց/ Սմբատ	1886
Դանիելյան Ղազար	1853-1854
Դանիելյան Մկրտիչ /Ալեքսանդրապոլ է տեղափոխվել Նուխիից/	1860
Դանիելյան Մուղղուսի	1856
Եղիյան Պողոս	1846-1856
Եղիյան Սարգիս	1887
Էլրակյանց Մանուկ Հովհաննեսի	1913
Թոքմաջյանց Հովհաննես Մկրտիչի	1908-1913
Իզմիրյանց Սեդրակ	1909
Խաչատրյան Սարգիս	1845-1848

Գրիգոր Աղանյան

Ծատրոյանց Սեդրակ Մարտիրոսի	1913
Կարանյանց Հովհաննէս	1887
Կարապետյան Գևորգ	1858-1867
Կարապետյան Մարտիրոս	1858-1867
Կարապետյան Մկրտիչ	1867
Կարապետյան Նազարէթ /Ալեքսանդրապոլ է տեղափոխվել Ախալցխայից/	1849
Կոշտոյան Սարգիս	1844-1867
Կոշտոյան Գրիգոր	1865-1866
Կոշտոյան Պապիկ	1867
Կոշտոյան Գևորգ	1879-1884
Կոշտոյան Մարտիրոս	1884
Կյուրեղյան Անտոն	1845-1846
Կոստանյան Աղաբաբ	1887
Կոստանյան Գևորգ	1886
Հայրապետյան Արշակ	1886
Հակոբյան Հովհաննէս	1844
Հակոբյան Համբարձում /Համբար/	1844-1854
Հակոբյան Նազարէթ	1848-1869
Հակոբյան Դավիթ	1887
Հալաջանց Ստեփան	1886-1887
Հալաջանց Հայկ Ստեփանի	1909-1913
Հալաջանց Գևորգ Ստեփանի	1909-1913
Համբարյան Հովհաննէս	1855-1866
Համբարյան Հովակիմ	1867
Համբարյան Գևորգ	1887
Համբարձումյան Օհան	1867-1869
Հարությունյան Հակոբ	1861-1869
Հարությունյան Առաքել	1879-1884
Հարությունյան Վարդան	1867-1879
Հարությունյան Մուղղուսի Սաֆար	1858-1867
Հարությունյան Հովհաննէս	1886
Հարությունյան Սահակ	1886
Հասանօղլյան Հովակիմ	1855
Հովակիմյան Դավիթ	1869
Հովակիմյան Գևորգ	1884
Հովհաննիսյան Հովակիմ	1844-1873
Հովհաննիսյան Գևորգ	1844-1848
Հովհաննիսյան Կարապետ	1845
Հովհաննիսյան Միքայել/Մուկո/	1844
Հովհաննիսյան Սաֆար	1856
Հովսեփյան /Օսիպյան/ Նազարէթ	1844-1854
Հովսեփյան /Օսիպյան/ Մուղղուսի Գրիգոր	1856-1861

Ղամբարյան Գևորգ	1879
Ղարիբյան Արշակ	1887
Մադինյան Դավիթ	1884
Մակարյան Ստեփան	1887
Մանուկյան Հարություն	1887-1892
Մանուկյան Սիմոն	1887
Մանուկյան Համազասպ	1908-1913
Մանուկյան Հմայակ	1908-1913
Մարեմյանց Գրիգոր	1879
Մարտիրոսյան Հովհաննես	1884-1909
Մեսրոպյան Գրիգոր	1844
Միքայելյան Դանիել	1852
Միքայելյան Մկրտիչ	1856-1869
Միկեայան Հարություն	1886
Մկրտչյան Հակոբ	1886
Մկրտչյան-Զարգարյան Հարություն	1884-1892
Մկրտչյան Գրիգոր	1884
Մկրտչյան Մարտիրոս	1884
Մկրտչյան Մուղղուսի Դանիել	1845-1857
Մկրտչյան Մուղղուսի Դանիել	1845-1857
Մկրտչյան-Զարգարյան Հովսեփ	1884-1892
Մկրտչյան Ստեփան	1879-1884
Մկրտչյան Թովմաս Հովհաննեսի	1884-1895
Մինասյան Եղիկ	1887
Մկոյան Մուղղուսի Դանիել	1849-1869
Մնացականյան Թովմաս Հովհաննեսի	1892
Մոսեսյան /Մովսեսյան/ Մահակ Աբրահամի	1892
Յակիմյանց /Ակիմյանց/ Հովհաննես	1886
Նազարեթյան Գալուստ	1855
Նալգրանյանց Գրիգոր Հովհաննեսի	1913
Նալգրանյանց Հովհաննես Կարապետի	1913
Նալյանց Հակոբ	1855-1867
Նալյանց Հարություն	1867
Նամաջանյան Հակոբ	1844-1857
Նահապետյան Մարտիրոս /Ալեք-Պոլ է տեղափոխվել Ախալցխայից, 1870թ. մասնակցել է Ս.Պետերբուրգի ցուցահանդեսին/	1889
Ներսեսյանց Թադևոս	1887
Ներսեսյանց Պարույր Հովհաննեսի	1913
Նիկողոսյան Մուղղուսի Եղիկ	1862-1884
Շահրիմանյան /Շաքրիմանյան/ Հովհաննես Փիլիպոսի	1909-1913
Չիլինգարյան Մկրտիչ	1844
Պապանյանց Կարապետ	1846-1856

Գրիգոր Աղանյան

Պապանյանց Արշակ Աթիկի /աշխատել է նաև Սուխումում/	1884
Պապանյանց Ստեփան	1884-1886
Պարունակյանց Գևորգ	1879-1887
Պարունակյանց Ալեքսանդր Գևորգի	1909-1913
Պարունակյանց Հովհաննես	1879-1887
Պարունակյանց Բագրատ Հովհաննեսի	1913
Պարունբեկյան Գևորգ /աշխատել է նաև Թիֆլիսում/	1865-1866,
Պետրոսյան Արշակ Պետրոսի	1884-1913
Պողոսյան Պողոս	1844-1845
Պողոսյան Մանուկ	1879
Զալալյան Մկրտիչ	1858-1867
Ռափայելյան Աղաջան	1844-1866
Ռափայելյան Միքայել	1844-1850
Սահակյան Մկրտիչ	1845-1848
Սահակյան Գրիգոր	1887
Սարգսյան Պարունակ	1844
Սարգսյան Գրիգոր	1844-1869
Սարգսյան Մաթևոս	1855
Սարգսյան Մկրտիչ /Մկրտում/	1845-1867
Սարգսյան Մուղղուսի Պապիկ	1858-1859
Սարգսյան Մուղղուսի Գևորգ	1867
Սիմոնյան Գրիգոր	1845-1887
Սողոմոնյան Համազասպ	1884
Ստեփանյան Մուղղուսի Գրիգոր	1846
Սուջանց Մկրտիչ /Կարսում ևս ոսկերչական խանութ է ունեցել/	1909
Սուքիասյան Հաջի Մուղղուսի Մկրտիչ	1857
Սուքիասյան Մաթևոս	1850-1867
Սուքիասյան Պետրոս	1879
Սուքիասյան Պողոս	1858-1886
Սուքիասյան Սիմոն	1852-1854
Սուքիասյան Ստեփան /աշխատել է նաև Շամախում/	1863-1869
Սուքիասյան Թովմաս	1867
Վարդյան Հովակիմ	1886-1887
Վարդյան Ստեփան	1887
Տարախչյան Մկրտիչ	1879
Տարախչյան Մարտիրոս Մկրտիչի	1913-1915
Տիգրանյան Արամ Տիգրանի	1913
Տիրոյանց Հայկ Հակոբի	1892
Փիլոսյան Աղաբեկ	1887
Քարալանյան /Խարալանյան/ Պրոստորոմ	1879
Քարալանյան /Խարալանյան/ Թովմաս	1884
Քիդեկցյան /Կիդեկցյան/ Գրիգոր	1887
Քիդեկցյան /Կիդեկցյան/ Հակոբ Սարգսի	1903-1916

Ս կ զ ր ն ա ղ ր յ ու ռ ն ք

1. Աղանյան Գ. Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Լենինական, 1986-1987:
2. Աստվածաշունչ մատենան հնոց և նորոց կտակարանաց
3. Եղարգարյանց Ս. Համբարական միություններ, «Մշակ», 1890, № 145:
4. Նալյանց Ա. Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1873, № 24:
5. Տնայնագործությունը Կովկասեան ցուցահանդեսում, «Մուրճ», 1901, № 10:
6. Նիկողոսյան Ն. Լենինական, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

7. Բազեյան Կ., Աղանյան Գ. Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ, Ծիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, հ.2, Երևան-Գյումրի, 2015, 7-117 էջեր:
8. Սեղբոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, / Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Եր., 1974, 59-252 էջեր:
9. Аствацатурян Э. История оружейного и серебряного производства на Кавказе в XIX- начале XX в. Дагестан и Закавказье, ч. I, М., изд. “Наука”, 1977.
10. Аствацатурян Э. История оружейного и серебряного производства на Кавказе в XIX- начале XX в. Дагестан и Закавказье, ч. II, М., изд. “Наука”, 1977.
11. Аствацатурян Э. Указатель клейм и имен кавказских мастеров оружейного и серебряного дела, М., изд. “Наука”, 1982.
12. Егизаров С. Исследования по истории учреждений в Закавказье, ч II, Городские цехи. Организация и внутреннее управление закавказских амкарств, Казань 1891.

R e f e r e n c e s

1. Aghanyan G. Ethnografic field material [Dashtayin azgagrakan nyut'er]. Leninakan, 1986-1987. (in Armenian)
2. Bible (in Armenian)
3. Egiazaryan S. Trade Unions, "Mshak", 1890, № 145. (in Armenian)
4. Nalyan A. Letter from Alexandropole, "Mshak", 1873, № 24. (in Armenian)
5. Handicrafts at the Csucasian Exhibition "Murch", 1901, № 10. (in Armenian)
6. Nikoghosyan N. Leninakan [Leninakan]. Archive of the Institute of Archeology and Ethnography of the NAS RA. (in Armenian)
7. Bazeyan K., Aghanyan G. Alexandropol: Ethnographic Sketshes (hystorio-ethnographic study) [Alek'sandrapol. Azgagrakan esk'izner (patmazgagrakan usumnasirutyun)], / Archaeological and Ethnographichal studies in Shirak, 2, Yerevan-Gyumri, 2014, 110 p. (in Armenian)
8. Seghbosyan K. Artisanal traditions and their expresssians in the life of the people of Leninakan [Arhestavorakan avanduytnery yev drants artahaytutyunnery Leninakantsineri kentsaghum] //Armenian ethnography and folklore, v. 6, Yerevan, publishing AN Arm.SSR, 1974, pp. 159-252. (in Armenian)
9. Astvatsaturyan E. History of arms and silver production in the Caucasus in the 19 th -early 20 th senturies. Dagestan and Transcaucasia, [Istoriya oruzheynogo i serebryannogo proizvodstva na Kavkaze v XIX- nachale XX v. Dagestan i Zakavkaz'ye] part I, Moskow, ed. «Sciance», 1977. (in Russian)
10. Astvatsaturyan E. History of arms and silver production in the Caucasus in the 19 th -early 20 th senturies. Dagestan and Transcaucasia, [Istoriya oruzheynogo i serebryannogo proizvodstva na Kavkaze v XIX- nachale XX v. Dagestan i Zakavkaz'ye] part II, Moskow, ed. «Sciance», 1977. (in Russian)
11. Astvatsaturyan E. Index of marks and names of Caucasian gunsmiths and woodworkers [Ukazatel' kleym i imen kavkazskikh masterov oruzheynogo i derebryannogo dela] Moskow, ed. «Science», 1982. (in Russian)

12. **Egiazarov S.** Research on the history of institutions in Transcaucasia, part II, City workshops. Organization and internal management of Transcaucasian Trade Unions. [*Issledovaniya po istorii uchrezhdeniy v Zakavkaz'ye, ch II, Gorodskiy tsekhi. Organizatsiya i vnutrenneye upravleniye zakavkazskikh amkarstv*] Kazan 1891. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **06. 11. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **14. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Գրիգոր Թորգոմի ԱՂԱՆՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439

Grigor Thorgom AGHANYAN: Researcher at Institute of
Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail: aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439

Григор Торгомович АГАНЯН: Научный сотрудник
Института археологии и этнографии НАН, Ереван, РА
эл. адрес: aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439